ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ

2025թ. օգոստոսի 26-ին, N 307-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲԱԶՄԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՎԵՐ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՉՈՐԱՑԱԾ, ՑԱՆԿԱՊԱՏԵՐԻՆ և ԵԶՐԱՔԱՐԵՐԻՆ ՍԵՐՏԱՃԱԾ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից 07.08.2025թ.-ին ստացված թիվ Ե/01/2546-25 գրությունը

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Բազմաղբյուր բնակավայրի Նվեր Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոցի տարածքում առկա չորացած, ցանկապատերին և եզրաքարերին սերտաճած, ինչպես նաև շինարարական աշխատանքներին խանգարող ծառերի հատման նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը պարզելու նպատակով ստեղծել ուսումնասիրող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝ ուսումնասիրությունը կատարելուց հետո ներկայացնել հանձնաժողովի եզրակացությունը և աշխատանքների ավարտից հետո ներկայացնել դրաց արդյունքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8/26/2025

X

VERIFIED OCSP 8/26/2025 17:37:06 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2025թ.
օգոստոսի 26 N 307-Ա
որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲԱԶՄԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՎԵՐ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՁՈՐԱՑԱԾ, ՑԱՆԿԱՊԱՏԵՐԻՆ և ԵԶՐԱՔԱՐԵՐԻՆ ՍԵՐՏԱՃԱԾ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մ. Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ / հանձնաժողովի նախագահ /

Ա. Ղազարյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության խորհրդական

Գ.Սահակյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Գ. Խուդաթյան- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրերի իրականացման և վերահսկողության վարչության ծրագրերի իրականացման մասնագետ /համաձայնությամբ/

Ռ. Վարդանյան – Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի շրջակա միջավայրի և սոցիալական բաժնի պետի տեղակալ/համաձայնությամբ/

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար

25.08.2025

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2011650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ